

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանյանի աշխատանքային այցելությունը մեր համար մեկնեցաւ Իտալիա: Օսկանյանի հանդիպումներ պիտի ունենայ Իտալիոյ արտաքին գործոց փոխ նախարարին, խորհրդարանի արտաքին գործերու մշտական լիարժեք նախագահին եւ բարձրաստիճանի այլ պաշտօնատարներու հետ: Այցելությունն ընթացքին պիտի ստորագրուի Հայաստանի եւ Իտալիոյ միջեւ եկամտուններու եւ գոյքերու հարկերու առնչութեամբ կրկնակի տուրքերը բացառելու մասին համաձայնագիր մը:

«ԱՐՄԵՆՓՐԵՍ»

ՄԷԿ ՄԻԼԻՈՆ Լ. Ո. ՀԱՏՈՒՅՈՒՄ ՎԱՐՈՐԳՆԵՐՈՒՆ

Կառավարութիւնը երէկ գումարեց իր ժողովը Թանգարանի իր կեդրոնատեղիին մէջ, նախագահութեամբ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի եւ ներկայութեամբ Վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Ժողովին քննարկուեցան երկրին ներքին ապահովութեան վերաբերող հարցեր:

Կառավարութիւնը հաստատեց, որ թիւ 341 որոշումը պիտի գործադրուի եւ յառաջիկայ Շաբաթ օրուրէն սկսեալ մալուրով բանող ինքնաշարժները պիտի արգիլուին: Սակայն կառավարութիւնը արտօնեց, որ վրասաշրջութեան ծառայող օթոպիւսները (նոր կամ գործածուած) որոնք տակաւին հինգ տարին չեն ամբողջացուցած, բանական ձեւով աշխատին:

Որոշուեցաւ նաեւ մալուրով բանող ինքնաշարժներու վարորդներուն յատկացնել մէկ միլիոն Լ. Ո. Ի հատուցում, որպէսզի ինքնաշարժին շարժակը վերածեն պենսիոնով բանող շարժակի: Այն վարորդները, որոնք փոքր օթոպիւսները, որոնք 15 հոգիէ աւելի չեն կրնար փոխադրել եւ որոնք 35 հապար քմ. չեն կտրած, 1995էն աւելի հին են, պիտի ստանան երկու միլիոն Լ. Ո. Ի հատուցում: Վարիչները այն փոքր օթոպիւսներուն, որոնք 1996էն աւելի նոր են, պիտի ստանան հինգ հարիւր հապար Լ. Ո. Ի:

Ժողովի աւարտին վարչապետ Հարիրի արձարծեց յառաջիկայ տարուան պետական պիւտձէի ծրագրի պատրաստութեան հարցը եւ առաջարկեց անմիջապէս անոր պատրաստութեան: Հարիրիի առաջարկը երկրորդեց նախագահ Լահուտ:

ՄԱԶՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ԻՆՔՆԱՇԱՐՋՆԵՐՈՒ ՎԱՐՈՐԳՆԵՐՈՒ ՅՈՅՑ

Թաքսիներու վարորդներ երէկ կէսօրէ ետք Քոլայի կամուրջին մօտ խմբուեցան, ապա ցոյց կատարեցին նախարարաց խորհուրդին կեդրոնատեղիին ուղղութեամբ՝ ընդդիմութիւն յայտնելով մագլցման օրէնքին ինքնաշարժները արգիլելու օրէնքին գործադրութեան դէմ:

Ապահովական խիստ միջոցառումներու տակ ցոյցին ընթացքին վարորդները յիշեալ օրէնքի գործադրութենէն առաջ հատուցումներ պահանջեցին:

Ցոյցէն առաջ վարորդներու սենտիքաներուն դեկավարներուն կատարած յայտարարութիւնները, լուծումի մը յոյսեր յայտնելով՝ մագլցողական քայլերէ հրաժարելու հաւանականութեան ակնարկած էին:

ԺՈՂՈՎ՝ ՅՈՅՅԵՆ ԱՈԱԶ

Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան կեդրոնատեղիին մէջ երէկ կէսօրէ առաջ գումարուեցաւ ժողով մը, որուն մասնակցեցան «Կարմիր թիւ» ինքնաշարժներու վարորդներու սենտիքաներուն համադաշնակցութեան նախագահ Ապտէլ Էմիր Նափտի եւ ցամաքային փոխարտամիջոցներու վարորդներու սենտիքաներու համադաշնակցութեան

Շարք՝ էջ 3

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԶՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Էմիլ Լահուտի Յովնանեան երէկ այցելեց Պապատափի նախագահական պալատ, ուր տեսակցութիւն մը ունեցաւ նախագահ Կոր. Էմիլ Լահուտի հետ:

Խորհրդակցութիւններուն առանցքը կազմեցին երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան առնչուող հարցեր, ծրագրեր: Խօսուեցաւ նաեւ նախարարութեան դիմագրաւած դժուարութիւններուն մասին:

Հանդիպումին նաեւ քննարկուեցին նիւթ դարձան սեղանի եւ շրջանային քաղաքական հարցեր:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵՑ ՌԱՄԱԼԼԱՅԻ ՄԷՋ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատ փոփոխութիւններու ենթակած էր կառավարութիւններու ենթակարգութիւններու ծրագրի մը ծիրէն ներս: Միացեալ Նահանգներ եւ Իսրայէլ արմատական բարեկարգումներ կը պահանջեն պաղեստինեան իշխանութենէն: Արաֆատի խորհրդատու Նապիլ Ռուտաբա ըսաւ, որ կառավարութիւնը իր նիստին պիտի քննարկէ նոր կառավարութիւն մը, պաղեստինեան շրջաններուն մէջ վերաշինութեան աշխատանքը, ինչպէս նաեւ քաղաքական ընթացիկ ճիգերը՝ խաղաղութեան գործընթացը հունին վերադարձնելու համար:

Իսրայէլեան բանակը Ջորջթաութի գիշեր հեռացած էր Ռամալլայէն, ուր մտած էր երեք օր առաջ եւ պաշարման օղակի մը տակ առած Արաֆատի կեդրոնատեղիին: Եւրոպայ պաշարումին աւարտով մեկնաբաններ կը յուսան, որ թափ պիտի ստանան դիւանագիտական ճիգերը լուծելու համար աւելի քան մէկուկէս տարիէ ի վեր ծայր տուած տագնապը:

Արաֆատ անմիջապէս ժողովի հրահրեց նոր կառավարութիւնը, որուն առաջին նիստը, որ տեղի պիտի ունենար Երկուշաբթի օր, յետաձգուեցաւ Իսրայէլեան ուժերուն ներխուժումին պատճառով:

Արաֆատ կիրակի օր փոփոխութիւններու ենթակած էր կառավարութիւններու ենթակարգութիւններու ծրագրի մը ծիրէն ներս: Միացեալ Նահանգներ եւ Իսրայէլ արմատական բարեկարգումներ կը պահանջեն պաղեստինեան իշխանութենէն: Արաֆատի խորհրդատու Նապիլ Ռուտաբա ըսաւ, որ կառավարութիւնը իր նիստին պիտի քննարկէ նոր կառավարութիւն մը, պաղեստինեան շրջաններուն մէջ վերաշինութեան աշխատանքը, ինչպէս նաեւ քաղաքական ընթացիկ ճիգերը՝ խաղաղութեան գործընթացը հունին վերադարձնելու համար:

Իրամալլայի բնակիչները, որոնք երեք օրէ ի վեր «բանտարկուած» էին կրակմարի դրութեան պատճառով, երէկ իրենց բնակարաններէն դուրս եկան: Պաղեստինեան պաշտպանները գործի լծուեցան մաքրելու համար Իսրայէլեան ուժերուն պատճառով:



Պաղեստինցի երիտասարդ մը կը մաքրէ պաղեստինցեան իշխանութեան Գաթաֆաթի կեդրոնատեղիին առջեւ գտնուող բացութիւնը, իսրայէլեան ուժերու հեռացումէն ետք

որուն պատճառով աւելորդ վերցնելու համար անցարգելներու հսկայ քանակութիւններու հարկերը: Իսրայէլեան բանակը յայտարարած էր, որ Ռամալլայ մտած էր ծայրայեղականներ ձերբակալելու համար: Ըստ խոսումներուն ընթացքին


վերաբերուած են իսրայէլացի երկու գինուորներ եւ երեք պաղեստինցիներ: Պաղեստինեան պաշտպանութեան աղով՝ իսրայէլեան ուժերը երէկ մտան Թուպաս քաղաքը ժենիւի մօտ: Բանակին յայտարարուած

Շարք՝ էջ 10

ՅՆԴԿԱՍՍԱՆ – ՓԱԲՍԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ ՄԸ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՌԱՄՍՏԵԼՏ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ

Մ. Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնրիտ Ռամսֆելտ երէկ արտաքին գործերու նախարարին յայտնելով, որ յառաջդիմութիւն նկատած է կորիպային պէնքեր ունեցող 2 մրցակիցներուն միջեւ լարուածութիւնը նուազեցնելու եւ աղէտալի պատերազմ մը կանխարգիլելու վերաբերեալ՝ Սակայն Փաքիստան պոլիտեքոնոմի, որ սպառնալիքի իսկական նուազում չի տեսներ՝ սահմանին վրայ կուտակուած



Ռամսֆելտ կը տեսակցի Փաքիստանի արտաքին գործոց նախարարին հետ

հնդկական ուժերէն: Թիւն ունեցած էր Ռամսֆելտ, որ Չորթաբթի օր Նիւ Տեյիի մէջ տեսակցուած

Շարք՝ էջ 2

ԹԱՆՍՈՒ ԶԻԼԷՐ ԿԸ ԽՈԶԸՆԴՈՏԷ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ

Թուրքիոյ վարչապետ Պիլիքիմ Էրճանը յայտնած է, թէ երկրին ընդդիմադիր գլխաւոր ղեկավարը՝ Թանուք Չիլէր, կը խոչընդոտէ բարեկարգութիւնները, որոնք բանալի կարեւորութիւն կը ներկայացնեն Ե. Միութեան անդամակցութեան համար:

Մինչ Էրճանը ղեկի ընդդիմադրութիւն դարձած է՝ գորակցութիւն ապահովելու համար, կառավարական ընկերակցութեան մէջ դաշնակիցներէն մէկը ընդդիմութիւն արտայայտած է Ե. Միութենէն ներշնչուող օրէնքներու՝ աւելի եւս տկարացնելով ընկերակցութիւնը՝ կանխահաս ընտրութիւններու կայացման մասին մտահոգութեանց դուռ բանալով եւ շուկաներու մէջ վերիվայրուած պատճառներով:

Կ'ԸՍԵ ԷՃԵԻԹ ղի օրէնքները վաւերացնել տայ յայտարարութեան հակառակ ընդդիմադիր գլխաւոր կուսակցութեան՝ Ճիլդ Ուղիի ղեկավարին ընդդիմութեան: Կառավարական ընկերակցութեան ծայրայեղ աջակողմեան անդամ Ազգայնական Գործի կուսակցութիւնը մերժած է մարդկային իրաւունքներու վերաբերող բարեկարգումներու զօրակից կանգնելու:

Շարք՝ էջ 10

ՀԱՄԻՏ ՔԱՐՉԱՅ՝ ԱՖՂԱՆԻՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ



Քարզայ կը քուէարկէ

Համիտ Քարզայ երէկ շահեցաւ Աֆղանիստանի պատուիրակներուն մեծամասնութեան քուէները՝ յայտնապէս երկրին նախագահը դառնալով:

Աֆղանիստանի պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ 1,500 պատուիրակներուն 1,295 ի նպաստ Քարզայի քուէարկած է:

Մինչ այդ, քուիսներու ետիմ քաղաքական եւ գիւնուորական ղեկավարներ խորհրդակցութիւններ կը կատարէին Գործի կուսակցութեան եւ նախարարութեան հետ:

Իր խօսքին մէջ Քարզայ անհրաժեշտ նկատեց, որ Աֆղանիստանի խնայող յատկապէս տագնապներ եւ աղէտներ, ինչպէս նաեւ առաջը առնուի օտար միջամտութիւններու:

«Պիտի պաշտպանեմք մեր գերիշխանութիւնը մեր արեւմտեան գնով», ըսաւ Քարզայ եւ աւելցուց, որ Աֆղանիստան կ'ուզէ լաւ կապեր հաստատել իր դրացիներուն հետ, «որոնցմէ ոմանք տագնապի մատնած են մեզ»:

Քարզայ շեշտեց, որ երկիրը կ'ուզէ բարգաւաճում եւ մարտը ճամբաներ, սակայն ոչ մէկ գնով պիտի հրաժարի գերիշխանութենէն:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ԳՐԱՏԵՆԵԱԿԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ

Վարչապետ Ռաֆիք Հարիրիի լրատուական գրասենյակը երեկ գիշեր հրապարակեց հաղորդագրություն մը, որուն մէջ դատապարտեց իսրայէլեան «Հատրեց» օրաթերթին այն ամբաստանությունը, թէ Հարիրիի հսկայական գումարներ տրամադրած է Քալիտայի ահաբեկչական ցանցին:

Հաղորդագրությունը շեշտեց, որ այս ամբաստանությունը տեղեկատուական սուտ արշաւ մըն է Լիբանանի հասցէին եւ կը սպառնայ միջազգային ընտանիքին մէջ անոր դիրքին: «Նման ամբաստանություն մը կը սպառնայ նաեւ Լիբանան - Սուրիա միասնականութեան եւ իսրայէլական գործընթացին նկատմամբ անոնց որդեգրած միացեալ կեցուածքին, ինչպէս նաեւ Մատրիտի վեհաժողովի սկզբունքներուն եւ ՄԱԿի թիւ 242, 383 եւ 425 որոշումներու գործադրութեան, դիտել տուաւ հաղորդագրությունը:

ՆԱԽ ՄԻՋՄԱՐՈՆԻԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Կ'ԸՍԵ Հ. ՇԵՀԱՊ

Մարոնիներու Լիկայի հիմնադրութեան 50րդ տարեդարձին առիթով, Լիկայի նախագահ Հարէն Շեհապ երէկ տուաւ մամուլի աւուլիս մը, որուն ընթացքին կոչ ուղղեց՝ սկսելու նախ միջմարոնիական երկխօսութեան:

Շեհապ ներկայացուց Լիկայի հետագայ քաղաքական գործունէութեան զխաւոր գիծերը: Ան ըսաւ, որ միջմարոնիական երկխօսութեան սկսելէ ետք, կարելի կը դառնայ հասնիլ ազգային ընդհանուր երկխօսութեան:

«Քրիստոնեաները պետութենէն հեռու պահելու ոճը իսկապէս ազգային հասարակչոլորտին եւ պատճառեց մեր օրերու փտածությունը», ըսաւ ան՝ պահանջելով արագրել կացութիւնը:

«Երկիրը կը դիմագրաւէ բազմաթիւ հարցեր, ինչպէս՝ պաղեստինցի գաղթականներու բնակեցման դաւը եւ տնտեսական տագնապը, ըսաւ Շեհապ: Ան պահանջեց, որդեգրել երեսփոխանական ընտրութեանց արդար օրէնք մը, որ հարապատ ներկայացուցչութիւն կ'ապահովէ:

«Անհրաժեշտ է ուղղել լիբանանեւսուրիական յարաբերութիւնները, որոնք չեն կրցած պահպանել իրենց ռազմավարական մակարդակը», ըսաւ ան՝ ընդգծելով անհրաժեշտութիւնը գործադրելու թափէֆի մէջ որդեգրուած վարչական ապակեդրոնացումի դրութիւնը:

ՄԱՀԱԶԴ

Տիար Համայակ Պողոսեան եւ զաւակները՝ Յովիկ եւ Անի

Տէր եւ տիկին Յակոբ Առաքելեան եւ ընտանիք Տէր եւ տիկին Յարութ Հաճեքեան եւ ընտանիք Թասլաքեան ընտանիք Ապաճեան ընտանիք Սողոմոնեան ընտանիք Առաքելեան ընտանիք Հաճեքեան ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, ժօր եւ Հարազատին՝

ՌՈԶԻՆ ՊՕՂՈՍԵԱՆԻ (ՇՃԵԱԼ՝ ԱՊՐԱՃԵԱՆ 1935ԻԾ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 13 Յունիս, 2002, առաւօտեան ժամը 11:30ին, սրտի տագնապի հետեւանքով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 14 Յունիս, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը Պուրճ Համուտ, Մետրոպէան դպրոցին կից, Ուրբաթ 14, Շաբաթ 15 եւ Կիրակի 16 Յունիսին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մակի Զօրպաճեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Պողոս Զօրպաճեան եւ զաւակունք Տիկին Աշիէն Քիլիսեան ինչեքեան ընտանիք Սարգիսեան ընտանիք եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց Հարազատին՝

ԺԱՆ ԶՕՐՊԱՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 12 Յունիս 2002ին, Լոս Անճելըսի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

- Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 15 Յունիս 2002ին Լոս Անճելըսի մէջ:
- Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Լոս Անճելըս, հեռ. 818-3520053:

ՎԱՐՉԱՊԵՏ Ռ. ՀԱՐԻՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ Ն. ԼԱՇՈՒՏԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց երեսփոխան Նեւիպ Լաշուտը, որ հանդիպումէն ետք անգամ մը եւս վերապահութիւն յայտնեց Մեթնի մասնակի ընտրութիւններու ընթացքին եւ օրինապահութիւններուն համար՝ մերժելով քուէարկելու վարագոյրի գործածությունը վարտադիր չնկատելու մտեցումը: Ան յոյս յայտնեց, որ կառավարութիւնը գործնական քայլերով կը կանխարգիլէ հետագայ ընտրութիւններուն նման երեւոյթներու կրկնութիւնը:



Ն. Լաշուտ՝ վարչապետին մօտ

Վարչապետ Հարիրի նաեւ ընդունեց ԵՈՒՆԵՍԿՕ-ի պատւիրակները, որ Լիբանանի մասին քննարկեց հաստատութեան գործունէութիւնը, ապա ընդունեց Լիբանանի մէջ ներդրումներով հետաքրքրուած եւրոպական ընկերութիւններու պատուիրակներուն մը, որուն կ'ընկե-

րեսփոխան կրթական ծախսերը հոգալու հարցը: Վարչապետը երէկ նաեւ ընդունեց երեսփոխան Նապէմ Լուրին, իսլամ կրօնական ատեաններու դատաւորներու պատուիրակներուն մը Թրիփոլի հիւնը ի ն եր ու պ ա շ տ պ ա ն ո թ է ա ն մարմինը, որուն կ'ընկերակցէր մշակութիւնի նախարար Ղասսան Սալամէն:

«Հարիրի «իտալ» հաստատութեան վարիչ Լուրինը ի նախագահ Սամի Պարպիրիի հետ քննարկեց հաստատութեան գործունէութիւնը, ապա ընդունեց Լիբանանի մէջ ներդրումներով հետաքրքրուած եւրոպական ընկերութիւններու պատուիրակներուն մը, որուն կ'ընկե-

րակցէր նախկին երեսփոխան Թալալ Մըրասպի: Վարչապետը երէկ նաեւ ընդունեց երեսփոխան Նապէմ Լուրին, իսլամ կրօնական ատեաններու դատաւորներու պատուիրակներուն մը Թրիփոլի հիւնը ի ն եր ու պ ա շ տ պ ա ն ո թ է ա ն մարմինը, որուն կ'ընկերակցէր մշակութիւնի նախարար Ղասսան Սալամէն:

ՌԱՄՄՖԵԼՏ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ...

Հարունակուած Ա. Էջէն չապետ Աթալ Պեհարի Վաճիպիի հետ, ողջունեց Հնդկաստանի այս շաբթուան որոշումները՝ Փաքիստանի ծովային անդին ռազմականները տուն կանչելու, փաքիստանեան օդանավերու թռիչքներուն դէմ արգելքի վերջ տալու եւ Իսլամապատի մէջ նոր դէպք մը նշանակելու գծով:

Ռամսֆելտ Չորեքշաբթի օր Նիւ Տեյիթի մէջ յայտնած էր, թէ «Քալիտա» կրնայ Քաշմիրի մէջ գործել, սակայն Փաքիստանի մէջ երէկ ան շեշտած է, թէ որեւէ փաստ չկայ այդ տեղեկութիւնը հաստատելու համար:

գտնուող վայրերու վրայ, ինչպէս ջուրի բաշխումի դրութիւններ, սննդանիւթի մթերանոցներ եւ այլն: Իտալական Քորրիեր տելա Սիրա թերթը յայտնած է, որ գաղտնի ծրագիր մը մէջ օրինակը ձեռք ձգած է: Անիկա կը յայտնաբերէ, թէ կառավարութիւնը 3 տարուան համար 60 միլիոն եւրօ ձեռք ձգած է՝ պատրաստելու իր ստանդարտները:

ԿՈՐԻՉԱՅԻՆ, ԶԵՄԱԿԱՆ ԶԱՐՄԱԿՈՒՄԻ ՍԸ ՂԵՄ՝ ԻՏԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՍԸ

Իտալիա մշակած է ծրագիր մը՝ քիմիական, կենսաբանական կամ կորիպային յարձակումներու դէմ՝ կեղրոնանալով մեծ վտանգի տակ

Ներքին գործոց նախարար Քլաուտիօ Սքալոյա Չորեքշաբթի օր ըսած է, որ «Քալիտա»-ի բազմաթիւ հետեւորդներ կը գտնուին Իտալիոյ մէջ: (ՌՈՅԹԸՐԶ)

«ՔԱՅԻՏԱ - ԶԱՑՈՒՐ ԿԱՊԻՆ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ

Միւս կողմէ, Ռամսֆելտ երէկ մեծ կարեւորութիւն չէ ընծայած այն տեղեկութիւններուն, թէ «Քալիտա»-ի անդամներ կրնան Քաշմիրի մէջ գործել, մինչ Փաքիստանի կառավարութիւնը եւ պինտալ իմրակներու ղեկավարներ հերքած են ամբաստանությունները:

ԿՈՒՂՈՒԻ

• Այր մարդու հազուատի վաճառատան համար, ծախող օրինոր մը: Հեռ. 03-821600:

ԲԱՆՏԱԲՈՐՈՒԹՅՈՒՆ

Տեղ եւ տիկին 3արուք եւ Թամար Սուրճեանցեր բախտաւորուած են երկրորդ զաւակով մը «ՍԱՐՕ» 13 Յունիս 2002ին Պէյրութ:

Khobzar-Orient Plus Travel & Tourism Varna Starting from 350\$ Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides, Visa & taxes not included Cyprus 3 days 185 \$ Boat trip to Cyprus & Greece 380 \$ 01.900598, 901598 - 03.258336, 256254 www.orientplus.com

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԵՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ԸԵՇՈՄ) ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ -The Interference of Governments In Elections- Պիտի դասախօս՝ ԴՈԿՏ. ԶԱՄԱԼ ԵԱԶԻԺ Տեղի կ'ունենայ, Շաբաթ 15 Յունիս 2002ի Երեկոյեան ժամը 6:30ին, ԸԵՇՈՄ կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան-Աճեկի մէջ:

ԼԻԲԱՆԱՆԱՅՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՂԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ (IPEC) Նախագահութեամբ՝ ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՄԻ ԵՒ ՍԻՆ ԷԼ ՖԻԼԻ ԶԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՆ Զեկ կը հրաւիրեց Պուրճ Համուտի եւ Սին Էլ Ֆիլի շրջաններուն մէջ մանուկներու աշխատանքի դէմ պայքարի ծրագիրին մասին ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՆԴՊՈՒՄԻ ՍԸ: Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 14 Յունիս 2002, կտօրուան ժամը 12:00ին, ԼՕՍԻ «Արաքի Պուղոտեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ, Պուրճ Համուտ: • Յաւելեալ մանրամասնութիւններու համար հեռախոսել հետեւեալ թիւերուն՝ 01-253793-4-5:

ՎԱՌԵԼԱՆԻԹԵՐՈՒ ՆՈՐ ՍԱԿԱՅՈՅՑ

Պենսիլի սակր հարիւր 1. ուի նուազում արձանագրեց երէկ, իսկ ինքնաշարժներու յատուկ ֆիուլ օլլը՝ մէկ տուարի: Ուժանիւթի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամետ Ապտէլ Համիտ Պայտունի տուած որոշումին համաձայն, Հինգշաբթի 13 Յունիսին սկսեալ պենսիլի սակերը ստացած են հետեւեալ պատկերը: - 98 օքթան պենսիլի՝ 21,500 լ. ո., առանց կապարի, 95 օքթան պենսիլի՝ 19,300 լ. ո., առանց կապարի 90 օքթան պենսիլի՝ 19,100 լ. ո., քարիւղ՝ 7,700 լ. ո. եւ մապուր՝ 7,100 լ. ո.:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց կապալառուներու սենտիքան երէկ դիտել տուաւ, որ կապալառուներուն կացութիւնը վտանգի մատուցած է: • ՈՒԺԱՆՈՒԹԻ Եւ ջուրի հարցերու նախարար Մոհամետ Ապտէլ Համիտ Պայտուն Լիբանանի ելեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօրէն Քամալ Հալէքէն պահանջեց պատրաստել տեղեկագիր մը Տէր Ամարի եւ Չահրանի արտադրած էլեկտրականութեան քանակին մասին: • ՇԻԻՆԵՐՈՒ գերագոյն խորհուրդի փոխ նախագահ մի.թի Ապտէլ Էմիր Քապալան երէկ ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէն, որուն հետ քննարկեց պաղեստինեւսուրիական տագնապին առնչուած հարցեր, ինչպէս նաեւ՝ Լիբանան - Ֆրանսա երկկողմանի յարաբերութիւնները: • ՀԱՆՐՕԳՈՒՏ շինութեանց եւ փոխադրամիջոցներու նախարար Նեժիպ Միքաթի երէկ ընդունեց Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան եւ նաւատերերու պատուիրակութիւն մը, որոնց հետ քննարկեց նաւահանգիստներու եւ նաւերու առնչուած հարցեր: Միքաթի յայտնեց, որ Պէյրութի եւ Թրիփոլի նաւահանգիստներուն ապաւնտակաւորացումին առնչութեամբ բաւական յստակ կարծիք մը կապմըւած է: • ԵՐԵՍՓՈՒՍԱՆ ԱԿԱՆ ընտրութեանց նոր օրէնք մշակելու համար արդարութեան նախարար Սամիր ժրպի կազմած մասնագէտներու յանձնախումբը իր առաջին ժողովը պիտի՝ գումարէ Երկուշաբթի օր: Այս ժողովին ընթացքին յանձնախումբը պիտի ծրագրէ իր աշխատանքը, որուն նպատակն է սրբագրել Մեթնի մասնակի երեսփոխանական ընտրութիւններուն երեւան եկած թերութիւնները եւ քաջողումները: • ՍԵԼԻՍՍ ընկերութեան տնօրէն խորհուրդի նախագահ Սալահ Պու Ռասալ յայտնեց, որ «Է.Ֆ. Թի. Էմ. Էլ.» ընկերութիւնը, որ առնչուած է «Ֆրանս Թելեքոմ» իււմբին, պիտի դիմէ միջազգային դատաստանական խորհուրդին՝ բողոքելու համար այն օրինապահութիւններուն դէմ, որոնք Լիբանանի կը վրանան «Սելիս» ընկերութեան օրինական տիրութիւնը: Պու Ռասալ դատապարտեց հաղորդակցութեան նախարարութիւնը՝ ապօրինի ձեւով 300 միլիոն տուար պահանջելու յանցանքով:

ԱՄԱՌԱՅԻՆ ՅԱՅՏԱԳԻՐ COLONIE Կազմակերպութեամբ՝ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ 9 Յունիս - 29 Օգոստոս 3ԵՆ 12 տարեկան փոքրերու եւ պատանիներու համար: Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ 1:30: • ԶԲԱՂՈՒՄԵՐ՝ հայկական պար, գծագրութիւն, ձեռնարկ աշխատանք, ձատրակ, պասքէպոլ, ֆուլպոլ, փինկ - փոնկ, հայերէն լեզուի դասընթացը: ԱՅՍ ՏԱՐԻՆ ԼՈՒՄԻՒՐԻՆԸ ՖՐԱՆՏԵՆ ԵՒ ԱՐԱԲԵՆԼԵ ՆԵՉՈՒՆԵՐՈՒ ՎԱՐՈՒԹԻՒՆ (PRATIQUE), 2ՈՂՅՑ ԵՒ ԽԱՂԵՐ ՍԱՄԱԳԵՏ ՌԻՍԵՆՈՂԱԿԱՆ ՍԱՄԱԿՑՈՒԹԵԱՄբ Մասնակցութեան սակ՝ 100,000 լ. ո. + փոխադրածախս 30-35 \$ ըստ շրջանի: Արձանագրութիւն՝ Երկուշաբթի 1, Երեքշաբթի 2 եւ Ուրբաթ 3 Յունիս 2002ին, առաւօտեան ժամը 9:00էն 11:00: • Մանրամասնութեանց համար հեռախոսել 03-810491, 03-616791 եւ 03-325053 թիւերուն:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԵՉ ԱՇԿԵՐՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԿ Կիրակի, 16 Յունիս 2002ին, ժամը 9:30ին, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, աշակերտական Ս. պատարագ պիտի մատուցուի Պիտի Գախազաճի եւ քարոզի՝ ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Շայոթ Թեմի) Ս. պատարագի երգեցողութիւնը պիտի կատարեն Հայ Առաքելական Համայնքի վարժարաններու աշակերտները Սիրով կը հրաւիրեմք մեր սիրելի ժողովուրդին զաւակները եւ աշակերտներուն ծնողները՝ ներկայ գտնուելու բացառիկ եւ իրապատելի այս եկեղեցական առիթին: ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱՆԱՐ ԴՐԱՍՏԱՏՈՒԵՐՈՒ ԳՈՐԾԱՎԱՅՈՒԹԵԱՆ ԾԻՐԻՆ ՄԵՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԸ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ



Հայաստանի և Լիբանանի կեդրոնական դրամատուներուն միջև կայացած յարաբերութիւնները շրջագիծին մէջ, յաւելեալ գիտելիքներ և փորձառութիւն ձեռք բերելու համար Լիբանան գտնուող հայկական եռանդամ պատուիրակութիւնը, Լիբանանի կեդրոնական Դրամատան փոխ կառավարիչ Յարութիւն Սամուէլեանի ընկերակցութեամբ, երէկ Հինգշաբթի 13 Յունիսի առաւօտեան ժամը 9:00ին, այցելեց Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեանին:

Հանդիպումին ընթացքին Յ. Սամուէլեան ըսաւ, թէ երկու դրամատուներուն միջև յարաբերութիւնները սկսած են 1994 թուականին, երբ անոնց միջև կնքուեցաւ փորձագոյ մը, ըստ որում, կառուցները իրարու պիտի օժանդակեն թէ՛ թեքնիք և թէ շուկայական առումով: Ան նշեց, թէ դրամատուները փոխադարձաբար իրարու կ'օժանդակեն այն մարպետուն մէջ, ուր միւր կարիքներ կամ նուազ փորձառութիւն ունին: Դրամատան փոխ կառավարիչին համաձայն, վերջին Հայաստան այցելութեան երկիրներուն դրամատուներուն միջև կապերը ատելի ամրապնդուած են և գործակցութեան ծիրը ընդարձակուած:

Հայկական պատուիրակութեան մաս կը կազմեն Հայաստանի կեդրոնական Դրամատան պանապան բաժանմունքներու երեք պատասխանատուներ՝ Հերմինէ Յարութիւնեան, Դանիէլ Ապտաւան և Գրիգոր Մովսիսեան: Ասիկա երրորդ պատուիրակութիւնն է, որ Լիբանան կու գայ այս բնագավառին մէջ յաւելեալ աշխատանքներ տանելու համար:

Անդրադառնալով Լիբանանի մէջ յատուկ իրենց համար կազմակերպուած դրամատանային մարպին վերաբերող ամփոփ դասընթացներուն, սեմինարներուն և աշխատանքներուն՝ պատուիրակութեան անդամներ նշեցին, թէ այս մէկը օգտակար նախաձեռնութիւն մըն է տեսական գիտելիքներ գործնական գետնի վրայ տեսնելու, պանոսք ատելի փաստացիորէն ուսումնասիրելու և սերտելու առումով: Անոնք ըսին, թէ այս գործակցութեան միջոցով կողմերը կ'օգտուին իրարու փորձառութենէն և կ'ամրապնդուին ու կը խորանան իրենց գիտելիքները: Անոնք շնորհակալութիւն յայտնեցին այս ծրագիրին ետին կանգնող ու մղիչ ուժ հանդիսացող Յարութիւն Սամուէլեանին:

Դեսպանը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց և նշեց, թէ այս գործակցութեան ծիրին մէջ քաջալերելի և օգտակար է լիբանանեան դրամատուներուն հաստատումը Հայաստանի մէջ: Ան նշեց, թէ այսպիսի նախաձեռնութիւններ ատելի ևս կ'ամրապնդեն Հայաստանի և Լիբանանի դրամատանային կապերը և առհասարակ երկիրներու յարաբերութիւնները:

Lufthansa Miles & More

Ճամբորդ մեր ընկերութեան միջոցով և հաւաքէ կտտեր "miles" ԱՅՍ ԱՍԻՍ ՅԱՏՈՒԿՆԻՆԻ 500 կտտեր "miles", առաւել սովորական կտտեր "miles", երբ ձեր սովորող գնէք etix@-ով (Lufthansa's electronic ticket)

համացանցի կայք
www.lebanon.lufthansa.com

Յանգրա տեղիք քանակ համար դիմել մեր մարտիկական գրասենյակին կամ
Lufthansa: 01 - 347007

Lufthansa
A STAR ALLIANCE MEMBER

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար: Տէր և տիկին Փօլ Այանեան

ՆԱԽԱԳԱԿ ԼԱՇՈՒՄԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լախուտ երէկ ընդունեց Միացեալ Նահանգներու Ծերակոյտի ծագումով լիբանանացի նախկին անդամ Ճէյմս Ապու Ռըպը, որ կը գլխաւորէր պատուիրակութիւն մը: Պատուիրակութեան մաս կը կազմէին ամերիկացի թղթակիցներ, ցեղապանութեան դէմ պայքարող անձնատուրութիւններ և գործատերեր, որոնք Լիբանան կը գտնուին կացութեան ծանօթանալու նպատակով:

Ապու Ռըպը ողջունեց նախագահին հետ իր այցելութիւնը՝ յայտնելով, որ անցեալ տարուան ընթացքին կատարած իր այցելութեան առիթ ունեցած է լաւատեսեալ ըլլալու Լիբանանի կացութեան մասին: Ան նկատել տուաւ, որ նկատուելի են կարգ մը վաղ ցուցումներ, որոնք իրականացած են նախագահ Լախուտի իշխանութեան շրջանին: Ան ըսաւ, որ պիտի այցելէ նաև Սուրիա, տեսակցելու համար նախագահ Պաշշար Ասատի հետ:

Ապու Ռըպը նախանցեալ օր Հարալային Լիբանանի իր այցելութեան տպաւորութիւնները փոխանցեց նախագահ Լախուտին:

Հանդիպումին քննարկուեցան շրջանային հարցեր և անոնց նկատմամբ Լիբանանի կեցուածքները, ինչպէս նաև՝ Լիբանանի կողմէ անուրազ քայլերը, որպէս յի խաղաղութեան

բանակցութիւնները սկսին Միջին Արեւելքի տագնապի լուծման համար:

Նախագահ Լախուտ շեշտեց, որ Մ. Նահանգներ պէտք է անկողմնակալ կեցուածք ցուցաբերեն միջինարեւելեան տագնապի լուծման գծով և չպատճառաբանեն 11 Սեպտեմբերի ահաբեկչական յարձակումը և ահաբեկչութեան դէմ իրենց մղած պայքարը: «Նման քայլերու պարագային Մ. Նահանգներ Եւրոպեի առիթ ընծայած կ'ըլլան իր թշնամական գործողութիւնները շարունակելու պա-

ղետինցիներուն դէմ և ոչնչացուցած կ'ըլլան խաղաղութեան բանակցութեան ցակետը յոյսերը կամ փորձերը, ինչպէս նաև ՄԱԿի տուած միջապային որոշումներու գործադրութիւնը և Պէյրութի Արաբական Վեհաժողովէն բխած խաղաղութեան արաբական նախաձեռնութիւնը», նշեց ան:

Ապու Ռըպը Այնէլ-Քիսի մէջ խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրիի հետ տեսակցելէ ետք ըսաւ, որ քննարկած են հարա-

Շար.ը՝ էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆ – ՍՓԻՒՔ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍԻՆ ԶՐՈՅՑ

Կազմակերպութեամբ Թեքեան Մշակութային Միութեան վարչութեան, երկ երեկոյեան ժամը 8:00ին Թեքեան կեդրոնի «Հրաչեայ Սեդրական» սրահին մէջ տեղի ունեցաւ զրոյց մը, որուն թեման էր «Սփիւռք – Հայրենիք» Բ. խորհրդաժողովէն ետք»:

Զրոյցին ընթացքին խօսք առաւ Թեքեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու Մարմինի ատենադպիր Արտուրազ Մելիքութեան, որ խօսելով Մայիսի 27-28ին կայացած խորհրդաժողովին մասին, ըսաւ, թէ անոր հիմնական առանցքը կը կազմէին հայ ժողովուրդի միասնականութիւնն ու ինքնապահպանումը, Արցախի հարցի լուծումն ու ինքնորոշումը և Հայ Դատի հետապնդումը:

Ան անդրադարձաւ խորհրդաժողովին կողմէ որոշուած հռչակագիրին և կարգաց անոր հիմնական կէտերը: Խօսելով խորհրդաժողովի իրագործումներուն մասին՝ ան յայտնեց, թէ խորհրդաժողովը յաջողած էր համախմբել տարբեր շրջաններէ հայեր, քննարկումի առարկայ դարձնել այս ժողովուրդին մտահոգութիւնները և Սփիւռք – Հայաստան գործակցութեան ուղի մը գծել:

Ապա ներկայացուց Ա. Մելիքութեանին ուղղեցին խորհրդաժողովին մասին իրենց հարցումները:

ՄԱԶՈՒԹՈՎ ԲԱՆՈՂ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐՈՒ ...

Շարունակուած Ա. Էջէն

նախագահ Պասսամ Թլէյս և սենտիքաներէն ներկայացուցիչներ:

Ժողովին ընթացքին քննարկուեցան պետական պաշտօնատարներու հետ հաղորդակցութեան արդիւնքները: Որոշուեցաւ ցուցել և մագլցողական քայլեր առնելէ առաջ սպասել նախարարաց խորհուրդի այս առնչութեամբ տալիք որոշումներուն:

Ժողովին ետք Թլէյս յայտարարեց, որ սենտիքաներուն նպատակը մագլցողական քայլերն ու իսպախարական արարքներով երկիրն անդամալուծումը չէ, այլ՝ պահանջներուն հասնիլ, հետեւաբար ընդհանուր ժողով պիտի որոշէ ցուց կատարել կամ ոչ:

«Վարորդներուն հատուցում տալու հրամանակներ անընդունելի և որովհետեւ անկարելի պայմաններ կը դնէ», յայտնեց Թլէյս և հերքեց այն քրպարտութիւնները, թէ սպառնալի վախ մարմիններ կը հրահրեն սենտիքայական շարժումը: Նա ըստե՛ր ժողովին ետք յայտնեց, որ սենտիքաներու շարժումին հիմնական պահանջն է յատուկ սակով պէնսիւն ստանալ: «Ստատուներով պիտի չտարուին, այլ հաստատու միայն, երբ նախարարաց խորհուրդը այս իմաստով

պաշտօնական որոշում տայ», ըսաւ ան:

Նա ըստե՛ր նշեց, որ վարորդներուն պիտի ներկայացնէ այս ժողովին արդիւնքը և անոնց կը մնայ որոշել, թէ ցուց պիտի կատարեն կամ ոչ:

Թլէյս երէկ ձայնաւորուած հարցազրոյցի մը մէջ յայտնեց, որ տրամադրութիւն կայ վարորդներուն յատուկ սակով պէնսիւն տրամադրելու միջոցաւ լուծելու հարցը: Ան յոյս յայտնեց, որ նախարարաց խորհուրդը իրականութեամբ կը տայ հատուցումներուն գծով:

Նա ըստե՛ր ըսաւ, որ բողոքի շարժումին նպատակն է պաշտպանել վարորդներուն ապրուստը և այլ հարցեր կամ նպատակներ չի հետապնդել: «Ո՞վ է սպառնալի վատորակ մասկոթներ թողնող և այլ մակոթ միայն քրպանէ՞րը կը գործածեն», հարց տուաւ ան:

Հըզալայի հաւատարմութիւն ղիմադրութեան երեսփոխան Կարապետ Ռատուսեան, որ մակոթով բանող ինքնաշարժներու արգիլումին դիմաց խոստացած հատուցումները անարդար են և կոչ ուղղեց վերատեսութեան ենթարկելու պահանջ: Ան նկատել տուաւ, որ կան կենսոլորտի

ապականութի բազմաթիւ այլ ապականներ, որոնց առնչութեամբ ոչինչ կ'ընէ պետութիւնը:

Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Քարիմ Ֆարատունի կառավարութեան պահանջեց կազմել նախարարական յանձնախումբ մը, որ երկխօսութիւն ունենայ սենտիքաներուն հետ, համաձայնելու համար վարորդներուն տրուելիք հատուցումներուն շուրջ:

«Նախարարութեան պահանջները մէկ կողմէ մակոթով բանող ինքնաշարժներու պատճառով կենսոլորտային և առողջական աղէտը, և միւս կողմէ այս ինքնաշարժները արգիլելու կառավարութեան որոշումին առաջացող ընկերային տագնապը», ըսաւ ան:

Ֆարատունի դիտել տուաւ, որ օրէնքի գործադրութիւնը անյետանձգելի պարտաւորութիւն է, բայց կառավարութիւնը նաև պարտաւոր է դարձանել այս գործադրութեան բազմաթիւ լիբանանացիներու վրայ ունենալիք անդրադարձը, որովհետեւ վարորդները չեն այս իրավիճակին պատասխանատուն, այլ մակոթն ու մակոթով բանող շարժակները ներածած «մաֆիան»:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր երէկուան թիով գլխաւորաբար կը կեդրոնանար մակոթով բանող ինքնաշարժներու հարցին, այս առնչութեամբ կատարուած ցուցերուն, բողոքներուն և կառավարական կեցուածքներուն վրայ:

«Նահար» օրաթերթը կը գրէր, որ «պետութիւնը իր կեցուածքը կը կարծրացնէ մակոթով բանող ինքնաշարժները արգիլելու հարցով: Շաբաթ օր որոշումին գործադրութիւնը պիտի սկսի, հակառակ ցուցերու սպառնալիքներուն»: «Մուսթաքպա»-ի համաձայն, «Նեպիի Պըրրի, խօսելով մակոթի հարցին գծով սպառնալիքային մարմիններու միջամտութեան, կ'ըսէ, թէ գաղտնի սպասարկութիւնները ինչ կարգի վրայ, որ ձեռք դնեն սպասուած արդիւնքին հակառակը կ'արձանագրուի բարեբախտաբար»:

«Պայրաք» կը նշէր. «Մակոթը կը բռնկի պէնսիւնները և տեք ևս Նեպիի Պըրրի Վորափիգ կը կանգնի ներքին գործոց նախարարին որոշման կտրուկ գործադրութեան գծով»: Թերթը նաև անդրադառնալով Մեքի ընտրութիւններուն կը գրէր, թէ կառավարական աղբիւրի մը համաձայն, վարչապետը, որ իրապարակաւ կը պաշտպանէր Միւրա Մըրի թեկնածութիւնը, ըստ կարգ մը աղբիւրներու, 5 միլիոն տոլար տրամադրած է Կապրիէլ Մըրի ընտրապայքարին:

«Լիուա»-ի համաձայն, «իշխանութեան պետերը համաձայն են մակոթը արգիլելու հարցին շուրջ, յարմար լուծում մը գտնելու փնտռուած կը շարունակուի, Պէյրութի նահանգապետը վարիչներուն արտօնութիւն տուաւ, որ այսօր նախարարաց խորհուրդի նստավայրին առջեւ ցուց կատարեն»:

«Քիֆախ Արապի» կը գրէր. «Մակոթով բանող ինքնաշարժներու հարցը կը պղտորէ քաղաքական յարաբերութիւններու մթնոլորտը. հանրօգուտ շինութեանց երեսփոխանական յանձնախումբը Շաբաթ օր գետնի վրայ պիտի հետեւի ներքին ապահովութեան ուժերուն կողմէ արգիլման օրէնքին գործադրութեան»:

«Տիար»-ի համաձայն, «Մակոթի բողոքը կը բարձրանաւ և յստակ չէ, թէ հարցը վտու քաղաքական բնո՞յթ ունի, թէ վարիչներուն տրուելիք հատուցումներուն կը վերաբերի», իսկ Մեքի ընտրութիւններուն մասին՝ թերթը կը նշէր, թէ Միշէլ Մըր հաւանաբար սահմանադրական դատարանին բողոք ներկայացնէ Մեքի ընտրութիւններու հարցով:

Օրաթերթերը իրենց առաջին էջով կ'անդրադառնալին միջապային գետնի վրայ տեղի ունեցող իրադարձութիւններուն, որոնց կարգին՝ գլխաւորաբար պաղեստինեան հարցին:

Շար.ը՝ էջ 10

14 ՅՈՒՆԻՍԿՈՒՄ – 20 ՅՈՒՆԻՍԿՈՒՄ 2002

ԵՐԿԻՐ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

- Էջ 3... Բաղաբական բաժինով կը կարգանք «Պատուիրուած Հայաստան» յօդուածը: ՀՀԾի բարոզութիւնը ազգային արժեքներ դաւանողներուն... դէմ:
- Էջ 6... Արհմիութեան «ԵՆԵՍԵԱՆ» հարցազրոյց «Ալիք» արհեստակցական կազմակերպութիւններու միութեան նախագահին հետ:
- Էջ 7... Հայաստանի մէջ տիրող ընկերային - տնտեսական տագնապը կը մնայ «Երկիր»-ի մէջ արծարծուող հիմնական միւթերէն մէկը. այս ծիրին մէջ կը կարգանք «Աղբատութիւնը անարդար բաշխման արդիւնք է» յօդուածը:
- Էջ 8... «ՏՕՄ» դատարկ ձեռքով՝ յօդուածը կ'անդրադառնայ բուժաշխատողներու դիմազրուած ծանր ընկերային կացութեան:
- Էջ 9... Իրական բաժինով կը կարգանք «Զինդատաբար շարունակուած է խոչընդոտել» յօդուածը՝ 27 Նոյեմբերի քրեական գործին շուրջ:
- Էջ 11... Կրթական բաժինին մէջ «Երկիր» կը բանայ մոր թղթածրար մը «Լեզուաբանական «լարախաղացութիւնը» շարունակուած է» յօդուածով:

ՏԱՐԵԴԱՐՉԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ԱՅՍ ԱՍԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ ԲՈՒՈՐ ԱՍՏՈՎ ՍԿՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ. ԿԵՍ ԺԱՄՆՈՑ ՎԻԵՍՏՈ ՎԻԵՍՏՈ ՎԻԵՍՏՈ ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ՔԵՔԵՃԵԱՆ ՀԱՍՏ. Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԳՈՒՄԱՐՈՒԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Հայաստանի մշակույթի և կրթության նախարարությանը և Հայաստանի Գրողների Միությանը միջոցառման...

Համաժողովին նախագահելու լուրջ պատասխանատվություն կրող է «Մեծ հայրենական պատերազմի հիշատակը»...

Համաժողովը, որում ներկայացվել են հայ գրողների և լրագրողների...

Հայ գրողների միությունը և Հայաստանի գրողների միությունը...

Ներկայացվել է Հայ գրողների միության և Հայաստանի գրողների միության...

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽԹԱՆՈՒՄ

10 Յունիսին Հայաստանի ելեկտրոնային և տեսառձեռնարկային...

Ծրագրով նախատեսված է Հայաստանի հեռուստատեսության...

Ելեկտրոնային և տեսառձեռնարկային հաղորդումների...

Հանդիպման ընթացքին ստորագրված է նախագրով...

ԹՈՒՐԿԻՈՅ ԿՈՂՄԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐՈՒ ԶԵՌՔԵՐՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՑ

Թուրքիոյ մէջ մեծ գայլոյթ յառաջացած է այն տեղեկութիւնը, թէ Միացեալ Նահանգներէն...

Թրքական «Հիւրրիյէթ» թերթը կը գրէ, որ ուղղաթիռներուն գնումը խափանողներէն մէկը...

Թրքը կը նշէ, որ տակաւին 1990 թուականէն «Էքսիմպանթ» Թուրքիոյ 1,3 միլիարդ տոնայարի վարկ...

Ներկայիս 14 ճոր ուղղաթիռներուն գնումը կը նախատեսուի իրականացնելու Եռեալ վարկէն...

ԱՏՊԱՍԱԿԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՆԵՐՈՒ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆԸ ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԻ

Իրանահայ հին եւ անուանի առեւտրական թուամաններուն ընտանիքին առանձնատուները, որ կը գտնուի Արեւելեան Ատրպատականի Արասպարան գաւառի Անիլու կողովում...

Ժառանգութեան Պահպանման Կազմակերպչական կողմէն: Ատրպատականի թուամանեան առեւտրականներուն գերդաստանին անդամները առեւտրական շախմատ գործունէութիւն տարած են ժամանակին՝ առեւտրական տուներ հիմնելով թաւրիզի, Պաքու, Մոսկուայի, Լոնտոնի, Փարիզի, Նիւ Եորքի եւ այլ շրջաններու մէջ: Անոնք մեծ յաջողութիւններ ունեցած են գորգի արտադրութեան եւ առեւտրի, ձեռքարկութեան եւ առեւտրի, ձեռքարկութեան եւ առեւտրի, ձեռքարկութեան եւ առեւտրի...

Պարգէ Զեյնաբեկի մահուան առիթով, Ֆանարի Ս. Մատրան եղած են հետեւեալ նուիրատուութիւնները: Տոթթ. Արեգագ Գարակեօզեան 50,000 լ.ո., Պողոս Գալսեօեան 50,000 լ.ո., տէր է տիկին Շիրազի Մալխասեան 25,000 լ.ո., տէր է տիկին Անդրանիկ Գալսեօեան 30,000 լ.ո., տէր է տիկին Վարուժան Գալսեօեան 20,000 լ.ո., տէր է տիկին Ալպեր Զարկոբեան 20,000 լ.ո., Լեւոնի եւ Աննայի Զարկոբեան 20,000 լ.ո., Ֆիլիպ Խէյր եղբարը 75,000 լ.ո., տէր է տիկին Վահէ Մանգեթեան 20,000 լ.ո., տէր է տիկին Սարգիս Մովսէսեան 20,000 լ.ո., տէր է տիկին Պեշիմ Ֆարհ 20,000 լ.ո., տէր է տիկին Մանուկ Զոփայեան 20,000 լ.ո., տէր է տիկին Սորիս Ապուս 20,000 լ.ո., տէր է տիկին Նահապետ Զարկոբեան 20 \$, տէր է տիկին Պետիկ Զեյնաբեկ 10 \$, տէր է տիկին Պողոս Ալվազեան 15,000 լ.ո., Պոյաճեան ընտանիքը 20 \$, տէր է տիկին Հայկ Ծարոյեան 15,000 լ.ո., տիկին Գեղանուշ Խաչերեան 10,000 լ.ո., տէր է տիկին Կահրաբեկ Խաչերեան 10,000 լ.ո., տէր է տիկին Կարապետ Նոյնտեան 10,000 լ.ո., տէր է տիկին Ֆարէս Անթոնիոս 10,000 լ.ո., տէր է տիկին Նուպար Նապարեան 10,000 լ.ո., տէր է տիկին Գրիգոր Նապարեան 10,000 լ.ո., տէր է տիկին Ռաֆֆի Գալսեօեան 10,000 լ.ո., տէր է տիկին Շարք Ասաֆ 10,000 լ.ո., տէր է տիկին Խաչիկ Այնթապեան 20,000 լ.ո.:

Իրանական «Ռեսուրս» թերթը այդ առիթով կը գրէ, որ Արեւելեան Ատրպատականի նահանգայեան խումբ մը նահանգային ղեկավարներուն ընկերակցութեամբ այցելած է այդ վայրը եւ շնորհիւ թուամանեաններուն հնագիտական արժէք ունեցող առանձնատան պահպանման եւ վերանորոգման կարեւորութիւնը: Ըստ Մշակութային Ժառանգութեան պահպանման նահանգային վարչութեան ընդհանուր տնօրէնին, թուամանեան առեւտրական գերդաստանին առանձնատան վերանորոգչական աշխատանքներուն մասին որոշում կայացած է նաեւ Երևանի Մշակութային

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՍՆՈՅ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԵՐՔԸ

27 Մայիսին «Ճորճիքը Թայմ» եւ 1 Յունիսին «Արմիքիքը Տէյլի» թերթերուն մէջ հրատարակուած են յօդուածներ, որոնք մէջ կը յայտնուին այն կարծիքը, թէ Վրաստանի իշխանութիւններն ու բարձրաստիճանի պաշտօնատեղիները Հայաստանի նախագահն ու իշխանութիւնները կը մեղադրեն պետական անարեւելեան յանցանքով:

Ստեղծուած իրավիճակին առնչութեամբ Վրաստանի նախագահի մամուլ ծառայութիւնը յայտարարած է, որ «Ճորճիքը Թայմ»-ի հրատարակած յօդուածներուն մէջ արտայայտուած խմբագրական կամ հեղինակներու դիրքորոշումը կարելի չէ ընկալել իբրեւ Վրաստանի պետական դիրքորոշում, մանաւանդ որ այդ թերթը բազմիցս իր բացասական վերաբերմունքը արտայայտած է նաեւ Վրաստանի իշխանութիւններուն նկատմամբ:

«Բոլոր երկիրներու պետական եւ ոչ պետական կառույցներէն կը խնդրենք, որ անկախ լրատուական միջոցներու կողմէ տարածուած տեղեկութիւնները չընկալուին իբրեւ Թիֆլիսի պաշտօնական դիրքորոշում», ըսուած է յայտարարութեան մէջ:

ՍԹԱԻՐՈՓՈՂԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՄԱՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ ՕՐԷՆՔ՝ ԳԱՂԹԻ ԴԷՄ

Սթաւրոփոլի երկրամասի Պետական Տուման առաջին ընթացքով միաձայնութեամբ ընդունած է «Ապօրինի գաղթի կասեցման միջոցառումներուն մասին» երկրամասային օրէնքը:

Օրէնքին ուժեղացող յօդուածը քննարկումներուն ընթացքին բողոքներ յարուցած է երկրամասի դատախազութեան եւ արդարադատութեան մարմիններուն կողմէ:

Յօդուածին մէջ կը նշուի, թէ «ոռու քաղաքացիի, օտար քաղաքացիներու եւ քաղաքացիութիւն չունեցող անձերու կողմէ բնակելի շէնքի, բնակարանի եւ այլ անշարժ գույքի ձեռքբերումը բաւարար հիմք չէ բնակելու նպատակով տուեալ տարածքին մէջ անոր գտնուելու օրինականութիւնը ճանաչելու համար»: Սակայն պատգամաւորները յարողած են հսկիչ մարմիններուն համոզել իրենց ձեռնարկած օրինականութեան գծով:

Ըստ պատգամաւորներուն, օրէնքին մէջ խօսքը բնակարան ձեռք բերելու մասին է այն անձերուն կողմէ, որոնք ապօրինաբար կը գտնուին երկրամասի տարածքին, այսինքն՝ ընդհատակեայ գաղթից ետք Սթաւրոփոլի խորհրդարանականներուն կարծիքով, ընդհատակեայ գաղթող կը դառնան բոլոր անոնք, որոնք տասը օրէ աւելի կը գտնուին երկրամասի տարածքին եւ չեն արձանագրուիր:

Նշենք այստեղ, որ այս օրէնքին քննարկումէն առաջ Սթաւրոփոլի երկրամասի Պետական Տումանի պատգամաւորները այցելած են Կրասնոտար, ուր Կրասնոտարի երկրամասի Օրէնսդիր ժողովի պատգամաւորներուն հետ կայացած հանդիպումի մը ընթացքին ուսումնասիրած են գաղթի ղէմ պաշարի տեղական օրէնսդրական փորձը:

ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ՝ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐՈՒՆ

Այս տարուան ընթացքին «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրով Հայաստանի կառավարութիւնը Շիրակի մարզին տրամադրած է 85 միլիոն դրամ: Ըստ արձանագրուած գործազուրկներուն եւ աշխատանք փնտռողներուն թիւին, վերոյիշեալ գումարը բաշխուած է Համայնքներուն:

Վերոյիշեալ գումարին մեծ մասը տրուած է Շիրակի մարզային կեդրոնին, ուր արձանագրուած է շուրջ 30 հազար գործազուրկ: Ինչպէս անցեալ տարին, այս տարին եւս պիտի իրականացուի 60 միլիոն դրամի աշխատանք՝ ժամանակակից աշխատատեղեր ստեղծելով քանի մը հարիւր գործազուրկներու համար:

Արթիկի քաղաքապետարանը «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրին օժանդակութեամբ պիտի վերանորոգէ քաղաքի զլխաւոր փողոցներէն մէկը: Այդ գործին մէջ իրենց աշակցութիւնը կը ցուցաբերեն շրջանին գործարարները, որոնք 10 միլիոն դրամ կը տրամադրեն փողոցին ասֆալտապատման համար:

Բարեկարգման, փողոցներու նորոգութեան, կանաչ տարածքներու խնամքին ու տարբեր կրթական հաստատութիւններու եւ մարզային կեդրոններու նորոգութեան համար արդէն իսկ Շիրակի մարզային յանձնախումբին դիմած են կրթական օժանդակները: Այս կրթական օժանդակները շարքին են Գիւմրիի երաժշտական եւ մարզական դպրոցները: Պիտի վերանորոգուին նաեւ Գիւմրիի կարգ մը փողոցները:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակելի փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային)՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՛ հաստատուած՝ ներկայացնել «Ազդակ» ծանուցումներու գրասենյակը:

ՄԿՐՏԻՉ ՍԵՌԱԿԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՅՈՒՑԱՆԿԱԿԱՆ ՅՈՒՑԱԶԱՆԴԷՍ

7 Յունիսին Հայաստանի նկարչի Ծան մէջ բացուած է կատարուեցաւ Ժողովրդական նկարչի Մկրտիչ Սեդրակեանի 50ամեայ գործունէութեան նուիրուած նոր անհատական յորեխնակալն ցուցահանդէսին:

